

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тафлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մանկավարժական պահանջներ. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍԻՍԻՍԻՆ. Մատենագրութիւն. Գրգռած ա-
խորժանքներ. Նամակ Բազմաբն. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ. Նամակ Գերմանիա-
յից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Իտա-
լիայում:

ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՊԱՆԴԱՋՆԵՐ

Երեկվայ մեր յօդուածում մենք ցոյց
տուէինք, որ Ներքինիսան դպրոցի հոգա-
բարձութիւնից պահանջում են, որ նա
ընտրէ հոգեւորական տեսուչ, մինչդեռ ե-
րեւանի թեմական դպրոցի համար թոյլա-
տրելի են համարում հրաւերել աշխարհա-
կան տեսուչ: Դա հակասութիւն է, բոլոր-
ովին անհասկանալի:

Մեզ կարող են հարցնել, թէ ինչու չը
լինի տեսուչը հոգեւորական. Ինչ փնտ-
կաղոք է լինել դրանից: Մենք կը պա-
տասխանենք, որ մենք դեմ չենք տեսչի
հոգեւորական լինելուն: Մենք չենք կամե-
նում միայն տեսնել իրաւունքը սահմանա-
փակված: Տեսուչը կարող է լինել եւ աշ-
խարհական եւ հոգեւորական, միայն թէ
նա արժանաւոր մարդ լինի, հզուտ իր
գործին:

Մենք շատ քիչ անձինք ունենք մեր
հասարակութեան մէջ, որոնք առհասա-
րակ ընդունակ լինէին վարել պատասխա-
նատու վարչական գործեր եւ բարեխիղճ
վերաբերվելն զէպի իրանց պարտաւորու-
թիւնները: Մանաւանդ շատ քիչ են
այդպիսիները հոգեւոր դասակարգի մէջ,
որտեղ միայն նորերս սկսել են կրթված
կրտսեարդներ մուտք գործել եւ արդիւ-
նաւէտ գործունէութիւն ցոյց տալ: Մի-
թէ խելացի է առանց այն էլ սահմանա-
փակ շրջանը աւելի եւս փոքրացնել ու
սղծել եւ մեր դպրոցները զրկել կարողու-
թիւնից ընտրութիւն անելու մեր մօտ ե-
ղած մանկավարժական ոյժերի մէջ: Դա
ոյժերի տնտեսութեան տեսակէտից բոլոր-
ովին աննպատակայարմար է:

Սակայն այդ կարգադրութիւնը չէ դի-
մանում քննութեան եւ սկզբունքի տեսա-
կէտից: Մեր թեմական դպրոցների գոր-
ծերի վրա հսկողութիւնը յանձնված է
թեմակալ առաջնորդներին, որոնք ճանաչ-
ված են նախագահ հոգաբարձութեան մէջ
եւ իրանք են ընտրում կրօնական աւար-
կաների ուսուցիչներին, այնպէս որ կա-

տարեալ հնարաւորութիւն ունեն հսկե-
լու դպրոցների կրօնական կրթութեան
եւ ընդհանրապէս բոլոր գործավարութեան
վրա: Երբ որ թեմի հոգեւոր ներկայա-
ցուցչութիւնը այդքան ազդեցիկ զեր ու-
նի դպրոցական կեանքի որոշ կէտերում,
այլ եւ ոչ մի շարժառիթ չը կայ առան-
ձին սահմանափակումներ հնարել տեսչի
հոգեւոր կամ աշխարհական կոչման վրա:
Դպրոցում անցնում են բազմաթիւ դասա-
կան առարկաներ, որոնց աջող իւրացման
համար այն չէ կարելի, թէ ինչ կոչում
ունի տեսուչը, այլ որքան նա ընդունակ
է զեկավարելու ամբողջ մանկավարժական
գործը:

Մեր դպրոցների բարոյութեան տեսա-
կէտը աչքի առած ունենալով, մենք գրա-
նում ենք, որ թեմակալ առաջնորդի,
իրեն թեմի բարձր հոգեւոր ներկայացուց-
չի նախագահութիւնը հոգաբարձութեան
մէջ եւ արտօնութիւնները հոգեւոր դասե-
րի վերաբերութեամբ, աւելի քան բաւա-
կան են մեր հոգեւոր դպրոցների գուտ
հոգեւորական պահանջների համար, իսկ
այնուհետեւ պէտք է զլիսաւոր տեղը տալ
մանկավարժական եւ վարչական
պահանջներին եւ չը սահմանափակել
տեսչական ասպարէզը այն եւ այն դասա-
կարգի անձնաւորութիւններով: Հոգաբար-
ձութիւնը պէտք է ազատութիւն ունե-
նայ ընտրելու տեսուչ թէ հոգեւորական-
ներից եւ թէ աշխարհականներից:

Դպրոցների բարգաւաճումը, մանկավար-
ժական խելացիութիւնը այդ են պահան-
ջում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Dr. Leopold Messerschmidt: „Die Hettiter“. Leipzig
Դր. Լ. Մեսսերշմիտ. „Հեթիթներ“, Լայպցիգ, 1902.

Վերոյիշեալ պատմական ուսումնասիրութիւն-
ը կազմում է Լայպցիգում մասնագէտ պատ-
մաբանների խմբագրութեամբ հրատարակվող
«Der alter Orient» (Հին Արեւելքը) գիտական
ժողովածուի Դ. դարերը մասնաւորապէս գիրքը,
որի մէջ հեղինակը ի մի է ամփոփել վերջին
տարիներս Հեթիթների մասին լայն տեսած
պատմական, աշխարհագրական, հնախօսական
եւ մարաբանական հետազոտութիւնները, որ-
ոնք ընթերցողին հնարաւորութիւն են տալիս
մի ամփոփ գաղափար կազմելու այն ազգի վե-
րաբերմամբ, որի մասին տաս տարի առաջ Հին

դարի պատմութիւնը գրեթէ բոլորովին լռում
է միայն նրա անունն էր յիշում իւրեւ մի
ազգութիւն: Հայերիս համար աւելի մեծ նշա-
նակութիւն եւ հետաքրքրութիւն ունի հեթիթ-
ների պատմութեան լուսաբանութիւնը, որով-
հետեւ, ինչպէս արդէն յայտնի է, շատ հեղի-
նակաւոր հնագէտների, մասնաւորապէս Մարբուրգի
համալսարանի պրոֆէսոր Եմանուէլի կարծիքով,
նրանց եւ հայերի մէջ մօտ ազգակցութիւն կայ:
Մեսսերշմիտի աշխատութեան մէջ ամփոփված
են հետեւեալ պատմական-էական տեղեկու-
թիւնները հեթիթների մասին:

Հեթիթներ առեղծված, մենք պէտք է ընդու-
նենք ազգերի մի խումբ, որ նախապատմական
եւ պատմական շրջաններում ապրում էր հիւ-
սիսային Ասորիքում, հիւսիսային Միջագետ-
քում, Հայաստանում, Կապադովկիայում եւ
Կիլիկիայում: Այդ խմբին պատկանող ազգերից
մէկը Աստուածաշնչի մէջ յիշվում է Բէնե-խաթ
անունով, եգիպտացիները անուանում են խե-
թա, իսկ ասորեստանցիները՝ խաթթի: Վերջին
անունով էր ընդհանրապէս կոչվում հեթիթա-
կան ամբողջ ռասան, որ բոլորովին տարբեր-
վում էր թէ սեմիտական եւ թէ հնդկա-գերմա-
նական ռասաներից: Հեթիթական ազգերը ժա-
մանակի ընթացքում Փոքր-Ասիայից հեռացնե-
առաջ են շարժվել դէպի հարաւ եւ հարաւ-ա-
րեւելեան կողմերը: Շատ հաւանական է, որ
2000 թ. Ք. ճ. ա. վերոյիշեալ ազգերը մտել
են Ասորիք ու Միջագետք եւ այդ երկրները
խլել են բաբելոնական իշխանութիւնից: Այդ
բանը մեծ մասամբ հաստատում են Տէլ-Ամար-
նայում գտնված մի քանի նամակները, որոնց
վկայութեամբ Ասորիքն ու Միջագետքը հեթիթ-
ների կատարեալ սեփականութիւնն էին կազ-
մում: Տասնութհզորող դարում հեթիթական
նշանաւոր ազգերից մէկը կոչվում էր միթանի,
որ իր գոյութեամբ երբեմն մրցում էր ժամա-
նակակից երկու զօրեղ ու նշանաւոր պետու-
թիւնների հետ, որպիսին ներկայացնում էին
Եգիպտոսն ու Ասորեստանը: Վերջին պետու-
թիւնը մի քիչ ուշ, վերջ ի վերջոյ միթանի
ազգի տէրութեամբ անկման գլխաւոր պատճառը
դարձաւ: Այդ մի եւ նոյն դարում խաթթի
ազգը Գամիթից կամ Կապադովկիայից մտաւ
Ասորիք, եւ ինչպէս արդէն յայտնի է, հետե-
ւեալ երկու, այն է 14-րդ եւ 13-րդ դարերի
ընթացքում նուաճեց եւ իր իշխանութեանը
ենթարկեց Ասորիքը, որը օսմանը հանդու-
էր մինչեւ Հեթիթներ: Միայն Եգիպտոսի ամե-
նանշանաւոր փարաւոն Ռամզէս II-ին կամ
Սեթոսիսին աշողլեց յաղթել խաթթի ազ-
գին, որից յետոյ երկու ազգերի մէջ քաղաքա-
կան համաձայնութիւն եւ դաշնակցութիւն կա-
յացաւ եւ երկու տէրութիւնների քաղաքական

սահմանները որոշվեցին, ինչպէս որ վկայում է
Փարնակի տաճարում գտնված դաշնագրի ե-
գիպտական թարգմանութիւնը: Խաթթի ազգի
տէրութիւնը վերջ ի վերջոյ կործանվեց հեթիթ-
ական միւս ազգերի եւ արամայեցիների ար-
շաւանքի շնորհիւ. սակայն Եգիպտոսի գետի ա-
փում գտնվող Փարբամիլ քաղաքում իր պատ-
մական գոյութիւնը երկար ժամանակ պահպա-
նեց խաթթի ազգի հիմնած մի ուրիշ փոքրիկ
իշխանութիւնը, 717 թ. (Ք. ճ. ա.) վերջնակա-
նապէս նուաճվեց Ասորեստանից եւ նրա գլը
խաւոր նահանգներից մէկը դարձաւ:

15-րդ դարում Փոքր-Ասիայի արեւմտեան
կողմում տարւում էր հեթիթական մի ուրիշ
ազգ, Լիւքքի անունով, որ այդպէս էր կոչ-
վում Լիւկիայում եւ Լիկայոնիայում ապրողու
պատճառով եւ իր ժամանակին քաղ ազգի հըռ-
չակ էր վայելում: Մեսսերշմիտի կարծիքով,
հեթիթական էին եւ Գիւդէս թագաւորի հիմ-
նած Լիւդիայի ու Կիւլաքքոյի (Կիլիկիա) տէ-
րութիւնները: Հեթիթների Փոքր-Ասիայում
հիմնած զանազան, միմեանցից անկախ տէրու-
թիւնների վերջին օրհասական հարուածը
հասցրեց պարսից Կիրոս նշանաւոր թագաւո-
րը: Դրանից յետոյ հեթիթները կորցրին իրանց
նշանակութիւնը իւրեւ պատմական մի առանձին
ազգութիւն: Հեթիթները մի ուրիշ մեծ եւ
ընդարձակ պետութիւն հիմնեցին 850 թ. Հա-
յաստանում: Վանայ լճի չորս կողմում, որ եր-
կար ժամանակ Ասորեստանին քաղաքական գի-
ւադրութիւն ցոյց տուեց, մինչեւ որ 7-րդ դա-
րում պատմական ասպարէզից միանգամ ընդ-
միշտ անյայտացաւ: Ուրեմն, ինչպէս տեսնում
է ընթերցողը, Մեսսերշմիտի եւ ուրիշների
կարծիքով նախադասելի կամ Ուրարտիների
պետութիւնը նոյնպէս հեթիթական էր, որ
դեռ կարօտ է աւելի հաւանական եւ ճիշդ լու-
սաբանութեան:

Հեթիթական ազգերի պատմութեան լուսա-
բանութեամբ շատ են նպաստել այն մի շարք
պեղումները, որոնք կատարվել են մասնագէտ
հնախօսների զեկավարութեամբ առհասարակ
Արեւելքի այն բոլոր երկրներում, որտեղ մի
ժամանակ ապրել են վերոյիշեալ պատմական
ազգերը: Բայց դժբաղդաբար հեթիթական շատ
հնութիւններից մենք դեռ անկարող ենք օգտ-
վելու, որովհետեւ նրանց վրա գտնվող արձա-
նագրութիւնների լեզուի բանալին դեռ եւս չէ
գտնվել: Մինչեւ այժմ հեթիթական լեզուով
գտնվել են 33 մեծ եւ մի շարք մանր արձանա-
գրութիւններ, որոնց պատկերաւոր գրերի սիս-
տեմը շատ նման է բաբելոնական եւ եգիպտա-
կան պատկերազարդին: Այդ պատկերները գործ
են անվաճ երբեմն խօսքի, երբեմն վանկի եւ եր-
բեմն էլ հնչիւնի փոխարէն: Չը նայելով, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուղթիկ տպաւորութիւններ)

XV

Իտալական հին քաղաքների միւզէները ընդ-
հանրապէս կրկնակի հետաքրքրութիւն են ներ-
կայացնում, նախ իբրեւ գեղարուեստական
գունների հարուստ շտեմարաններ, ուր մեծա-
մասն արուեստագէտները թափել են իրանց
համարի պտուղները, եւ երկրորդ՝ մի հետա-
քրքիր անցեալից մնացած չքեղ յիշատակարան-
ներ: Դրանք մեծ մասամբ իտալական փոքրիկ
համալսարանների զբոսական գոտից պա-
տաներն են, ծեր վկաներ աւելի կամ պակաս
խոշոր պատմական անցքերի: Այդ շէնքերն անց-
նելով մարդ մի առ ժամանակ ապրում է ան-
ցած իրականութեան մէջ եւ գրքերում կար-
դացածը, երեւակայութեան տեսլիցան ու զար-
դարած ընդունում է մի այլ կերպարանը, որ
եթէ իսկականը, բացարձակ իրականը չէ, այ-
նուամենայնիւ աւելի ճշմարիտ է, քան բոլոր
պատմութիւնները:

Պատմական տեսակէտից հին շէնքերը ընդ-
րոշելու համար բանաստեղծական լեզուն ստեղ-
ծել է խօսքի մի բաւական բանալ զար-
ձուածը՝ համար վկաներ, որ սակայն կատա-
րելապէս չէ համապատասխանում պարունա-
կած գաղափարին. որ եւ է պատմութեան հա-
մար ինչ աւելի պերճաւոր վկայ, քան որ եւ է
յիշատակարան, մի պալատ, մի աշտարակ, մի
բանտ կամ մի պարիսպ: Չը կայ մի հին շէնք,
որ կատարելապէս համար լինի: Մենք սե-
րունքը մի անգամ ընդ միշտ ասես կնքում է
իր պատկերը, իր ամբողջ կեանքը մի շէնքի
վրա եւ ապա անցնում, ահա թէ ինչու եգիպ-
տական մի հատիկ բուրբը Փարաւօնն է իր
ստրուկ ժողովրդով, Հնօմի ամփոփաւորը՝
աշխարհին հրամայող կայսրութիւնն է, իտա-
լական զբոսի պալատները միջին դարերի գո-
ռոզ հանրապետութիւններն են:

Հին Ջենօվան էլ իր պատմութիւնը թողել
է մի շարք պալատներում, որոնք այժմ վերած-
ված են սիրուն միւզէների կամ դարձել են
կենտրոնատեղի քաղաքային կամ պետական
այս ու այն հաստատութեան: Այս շէնք շէն-
քերի բնաւորի մի գիծը ճարտարապետական
տեսակէտից այն է, որ նրանք յարմարեցրած
են գետին զանգվածներին, սկսվում են վարից
եւ ձգվում են դէպի մի բարձրութիւն, բայց

այնպիսի մի վարպետութեամբ, որ մարդ կար-
ծում է բարձրանալ շէնքի երկրորդ յարկը,
մինչդեռ իրօք մի բլրի վրա է բարձրանում:
Այս կողմից հետաքրքիր է մանաւանդ Ջենօ-
վայի զբոսական պալատը, որի շէնք աստիճան-
ները իրանց մեծութեամբ եւ փառաւորու-
թեամբ բաւական են գաղափար տալու համար
նրա անցեալ բնակիչների ոյժի եւ փարթամ
կացութեան վրա: Այժմ այնտեղ գետնիցված են
կառավարչական ինչ որ գրասենեակներ, հա-
մազգեստով մարդիկ յոգնած ու ձանձրալի
վրտում են նախկին անմատչելի դարձնելու,
կամ կոացած յօրանքում են գրոշմած ու խու-
նացած թղթերի կոյտի վրա: Շէնքի փառաւո-
րութեան եւ իր այժմեան դերի մէջ չը կայ ոչ
մի պատշաճաւորութիւն. բայց ինչ փոյթ.
պատմութեան էվոլյուցիան անյաղաք է. մի-
այն միշտ իւրաքանչիւր ներկայի մարդն է, որ
իր գործերը յաւիտենական կարծելու երեխա-
յական հաւատը եւ միջթարիչ իլլիւզիան ունի:

Միւզէն է վերածված Palazzo Rosso-ն, ուր
Տիգրանի, Գիւր-Բընէի մի քանի գլուխ գործոց-
ները տեսալ: Առաջինը դրել է այստեղ իր
«Մոգերի երկրպագութիւնը», եւ «Ապանիական
Փիլիպպոս II-ին», որ XVI դարի վերջին կրօ-
նական պատերազմների մէջ այնքան տխուր
շուշակ հանց, եւ բողոքականներն իրաւացի

կերպով անուանեցին «Հարաւի սատանայ»:
Պատմական մի հետաքրքիր դէպք է այն, որ
մարդկային խղճի վրա իշխելու խելագար փա-
ռասիրութեան համար եւ իր հակադաս կայս-
րութեան բոլոր ոյժը եւ իր անսպառ եռանդը
թափեց ամբողջ տարիներ եւ 1598 թ.ին մեռ-
նելով թողեց իր երկիրը աւերակ եւ հիւծ-
ված: Եւ Սպանիան մեռնում է այսօր այդ ֆա-
նատիկ եւ կոյր թագաւորի տուած հարուածից.
մեծ ոճիրների քաւութիւնը նոյնքան մեծ ու
ծանր է լինում:

Վանդիկն ունի այստեղ իր «Ձիաւոր խաչա-
կիրը» եւ Գիւր-Բընէն մի շատ սիրուն «Մէն-
Սերատիան», որ կրօնական խորին էքստազի
մէջ ասես չէ գգում իր մերկ մարմնի վրա
ցցված նետերը:

Մի այլ միւզէում, որ Palazzo Bianco (Սպի-
տակ պալատ) է կոչվում, Վանդիկի մի այլ նը-
շանաւոր գործը կայ—«Պարտ է հարկա տալ կայ-
սեր»—աւետարանից: Վանդիկը միշտ անմահ
է, երբ գլուխներ է նկարում, բայց այստեղ նա
երեք գլուխներ է պատկերապրել, որոնք հիաց-
մունք են շարժում: Փարիսիցիս, որ դրամն է
ցոյց տալիս, որքան յանցաւոր, խորամանկ եւ
ոռնոք կայ նրա դէմքին, մի այլ վրած, հարաւա-
յին դէմք, կնճռոտ, դեղին ձախտով եւ այն-
պիսի արտայայտութիւն ունի, որ կարծես ու-

հեթիթական արձանագործությունների կարգա-
լու եղանակը գեղ չէ գտնվել, բայց մենք
բաւական տեղեկութիւններ ունենք հեթի-
թական ազգերի լեզուների մասին, Հեթի-
թական լեզուներից մէկով մեզ հասել են սե-
պածեւ գրերի նման գրեր ունեցող մի քանի
արձանագործութիւններ, որոնք հնագէտների չնոր-
հիւ մասամբ կարգադրվել են թարգմանվել են
եւ, ինչպէս նրանք են կարծում, մօտ ազգակ-
ցութիւն ունեն վրացիների եւ կովկասեան մի
քանի ուրիշ ազգերի լեզուների հետ:

Հեթիթների մասին պատմական մանրամասն
եւ էական տեղեկութիւններ տալուց յետոյ,
Մեզ հայտնի մնացած է նրանց մարդաբանու-
թեան (Antropologie) Հեթիթներից մեզ հա-
սել են պատմական բազմաթիւ յիշատակարան-
ներ, որոնց չնորհիւ մենք հնարաւորութիւն
ենք ստանում պարզ ու որոշ գաղափար կաղ-
մել այդ ազգերի մարդաբանական տիպի մա-
սին: Հեթիթները քանդակված արձանների
վրա աչքի են ընկնում իրանց մեծ, կոր, ծուռ
եւ երկար թիթերով, սաստիկ յետ ընկած ճա-
կատներով, անմօրուս, կարճ եւ կլոր ծնոտե-
րով եւ կաշվի պարզ գոյնով: Գեղեցիկաւոր մի
քանի մարդաբաններ չափել են հեթիթական
չատ գանգեր եւ եկել են այն եզրակացութեան,
որ հեթիթները, հայերը եւ հրէաների մի մասը
կազմում են մարդաբանական մի առան-
ձին ու ինքնուրոյն առատ, որի ընդ-
րոշ յատկութիւնները են կարճ գլուխ,
թուխ աչք, սեւ մազ եւ մեծ ու կոր թիթ:
Վերջինիս արձանները մեզ տեղեկութիւններ
են տալիս եւ հեթիթների գործածած տարազի,
զարդարանքների եւ մասամբ նրանց կենցաղա-
վարութեան մասին: Բայց, դժբախտաբար, մենք
չաւտ բան չը գիտենք նրանց կրօնի մասին: Այսքանը
միայն որոշ կերպով յայտնի է, որ հեթիթների
մէջ չատ էր յարգված «Մեծ մայր» աստուա-
ծուհու պաշտամունքը, որի վրա հսկում էին
հոգեւորականները՝ միաստնի կանայք եւ ներ-
քինարմար Հեթիթական մի աւանդութիւն մեզ
մանրամասն պատմում է, թէ ինչպիսի մեծ
չուրով եւ հանդիսաւոր կերպով էին պաշտում
հեթիթները իրանց «Մեծ մորը»: Մի քանի սե-
պածեւ արձանագործութիւնների վկայութեամբ
արեւմտեան հեթիթների ամենանշանաւոր աս-
տուածը Թարընու էր, իսկ արեւելեան հեթիթ-
ներիսին թեչուպ, որի հիւսիսային Ասորիքում
գտնված արձանը ներկայացնում է նրան իբրեւ
պատեհազմող: Թեչուպի մի ձեռքում գտնվում
են կայծակի երեք ճառագայթներ, իսկ միւ-
սում մի մուրճ՝ պողպատե թիւղի միջոցով:

Հեթիթների մէջ չատ էր զարգացած քան-
դակագործութիւնը, մետաքսի կուլուրը, մա-
րմարեայ բրնձով տեխնիկան, ինչպէս որ ցոյց
են տալիս Վանայ լճի ափերում գտնաւոր պե-
ղուների ժամանակ գտնված բազմաթիւ իրե-
րը, որոնք մեծ մասամբ բրնձով են պատրաստ-
ված:

Լ. Բաբայան

Լ ա յ ա յ ց ի գ

ԳՐԳՈՒՎԱՄ ԱՅՈՐԺԱՅՆԻՐ

(Նամակ Նոր-Բայազէտի գաւառից)

Այս տարւոյ սկզբից Նոր-Բայազէտի գաւա-
ռի գրեթէ բոլոր գիւղերում իրանց նոր պաշտօ-
նի մէջ են մտել նորընտիր տանուտէրներ, հա-

զում է սակել «պատասխանի» թէ կարող ես,
եւ իր այդ հարցով կատարեալ յաջողական տա-
նելու չարամիտ յաւակնութիւնն ունի: Կիսա-
խաւարի մէջ գտնուող երկրորդ փարիսեցի
նոյնպէս դրամ ունի ձեռքին եւ մօայլ է որպէս
ոճիկ նիւթով մի չարագործ:

Ձենովայի ամենահետադէր գեղարուեստա-
կան միւլէն կարելի է ասել Դիւրացո-Պալա-
վիչինի պալատն է: Վերածնունդի մեծագոյն
վարպետների՝ Միքէլ-Անջելօի, Տիցիանի, Բու-
րենսի հետադէր գործերից կան այնտեղ գե-
տնված: Համարեա բոլոր այդ նկարներն էլ այն
հետադէր չըլնան են պատկանում, երբ միջ-
նադարեան միտքը յոգնած աստուածաբանական,
մետաֆիզիկական ամուլ վեճերից, յետ յետ է
նայում դարերի խաւարին եւ գնում է իր փրկ-
ութիւնը փնտրելու: զատական ժամանակների
ազատ քննադատութեան, յունական առողջ փի-
լիսօփայութեան, անեղծ գգացմունքի եւ բա-
նականութեան վառվառն թռիչքների մէջ:
Քրիստոնէական շրջանից ընտրած սիւսէներն
անգամ դիցաբանական անցեալի ոգին եւ երե-
ւայթն ունեն միանգամայն Տիցիանը մի հրա-
շալի «Մարիամ Մագդալենայի» ունի ալյուսեղ,
գիւթիչ, բարեձեւ մարմնակազմով, ազատօրէն
զարգացած, հարուստ կուրճը, հագել հագ

սարակութեան գալափներ, դիւղական դատա-
ւորներ եւ այլ պաշտօնական եկող քառամեա-
կի համար Դրանց այլապէս կարելի է անուա-
նել նաեւ գիւղական գործիչներ: Սակայն գիւղ-
կական պաշտօնավարութիւնը այնպիսի պաշ-
տանների մէջ է գտնվում, որ չառերի անոր-
ժակն է գրգռում դէպի այլ պաշտօն: Հին
հեւթից, նախկին տանուտէրից սկսած մինչեւ
վերջին «գլխի» ձգտում են ինքն գալափ
տանուտէր, երէցիտիս եւ այլն: Հինց որ ընտ-
րութիւնները մօտենում են, աչան վերջերին,
սկսում են կազմակերպվել գիւղական կուսակ-
ցութիւններ—այսուհի օգտներում լեզուներ
խնկելով՝ գիւղական ամբողջ կայացումը
«միտնիզներ», առանձին-առանձին ժողովներ,
առաջ են գալիս նորանոր թեկնածուներ՝ գըր-
գոված անորժակներով, պալքար, իրարանցում,
կուսակցական անվերջ ինտրիգներ, անպատկառ
վեճ, ընդհանուր դալմալալ... Արաղը մէջտեղ է
գալիս, դեր են խաղում զանազան մութ հան-
գումանքներ—ան, սարսափ, սպառնալիք, միւս-
չեւ իսկ աղապահ, պաշտօնալիք, խաթիւ եւ
խնամութիւն, իսկ բուն ընտրողական ճշմա-
րիտ սկզբունքը,—դա երբեք գոյութիւն չունի
գիւղական կուսակցութիւնների համար: Ընտ-
րութիւնը կայանում է, կուսակցութիւնները
տնեւելով, որ իրանց թեկնածուն յետ է մը-
նում, սկսում են նորից նոր խոչընդոտներ յա-
րուցանել նորընտիր անձնաւորութիւնների դէմ:
մի պատրուակով միայն անվաւեր համարելով
ընտրութիւնը ինտրիգները լարում են բոլորի
շղերը, սկսում է բողբ բողբի ետեւից, բե-
կանում են ընտրութիւնը եւ նոր ընտրութիւ-
նը նշանակում—կրկին նոյն խաղը, նոյն պայ-
քարը եւ այդպէս շարունակ անվերջ... Թայ-
ֆայական սկզբունքի համաձայն, գեղջկական
ամեն մի կուսակցութիւն ձիգ է թափում իր
թեկնածուն ունեւալ հասարակական գործիչի
դերում՝ իր մութ նպատակները կատարելու
համար...

Մենք մեր աչքով չատ անգամ ենք տեսել,
որ մի որ եւ է գիւղում ընտրութիւնները մի
քանի անգամ բեկանելով եւ նորընտիրներին
տապալելով՝ նոյն իսկ տարին վերջացել է եւ
գիւղական գործունէութիւնը, ի վնաս տեղա-
կան հասարակութեան, երեսի վրա է ընկած
մնացել, կամ թէ սրա նրա ձեռքը փոփոխակի
անցնելով՝ ոչ մի արդիւնաւէտ բան չէ ներկա-
յացնում տեղական ազգաբնակչութեան համար:

Մտքը գաւառի որ գիւղը կամենաք, նայեցէք տը-
ներին, շինութիւններին եւ այլ հաստատութեան
Որտեղ լաւ տներ տեսնէք, «լուսամուտներով»
սենեակներ, որո ձեւի շինութիւններ, ջրաղաց,
ոչխարի մեծ հօտ, մի քանի լուծ թփաններ եւ
այլ արանց նման բաներ,—բոլորը անշուշտ պատ-
կանում են գիւղի գալափին, տանուտէրին,
հեւթից, դատաւորին, երէցիտին եւ նոյն իսկ
տեղաբնիկ իսկ հասարակ ժողովրդի աները եւ
ընտանեանները այն խուղերն են, որոնք ձեռ
առաջ պատկերանում են գետնափոր, կրակազե-
նափոր գործեան, որոնց լաբիւրինթոսանման
անցքերով նոյն իսկ օր ցերեկով մարդ չէ կարող
առանց խաբխափելու անցնել:

Նոր-Բայազէտի գաւառում կան տասնեակ
գիւղական հասարակութիւններ (մօտ 120 գիւղ),
որոնց բոլոր պաշտօնականները գործում են ա-
ռանց մի կուլէկ ուժակի: Այդ դիպուածում
գուցէ շատերին զարմանալի երեւայ այն հանգա-

ւքոված չըլել մազերի թափանցիկ ծածկովով,
տեղերը կարմրած լացից եւ վառ այտերի վրա
երկու սիրուն կաթիլներ եւ այդ կինն իբր թէ
տուկ վայելեցնել, մերկ մարմնի կուլով վե-
րակենդանացնել եւ նրան հաւասար իրաւունք
տալ հոգեկան այլ հակումների հետ, որոնք ա-
ռաքնութիւն անունն են կրում: Մի տեղ եւ
տեսայ Բուրենսի Ալէքս ու Նախանձը, մի խիստ
ընտելորէ գործ. նկարին ինքն է գրկել իր չի-
կաներ, հաստամարմին կնոջը կրծքում, նոյն լոկ
անհամեստ շարժումով, երկու գէմբերն էլ վա-
յելի իր ձով բորբոքված, իսկ հեռուից նայում
է նախանձի չոր աչքը այն երջանկութեան վրա:
Սա մի յանգուգն մարտահրաւէր է միջին դա-
րերին, դա մի ըմբոստ ծիստ է, որով նկարիչը
կործան գալափացած թանգը խաւարի, անտա-
նեի դարձած բարոյական բնութեան դէմ,
յետ է քաշում ընդունված պատշաճաւորութեան
քողը եւ քանդում է դարերի մի ամբողջ շէնք:
Երեւոյթութիւնները ինչ շրջանում էլ կատար-
վելիս լինեն, երբեք առանց ծայրահեղութիւն-
ների չեն անցնում:

Իրեւոյ նկարչին հաճելի է եղել դարերի խա-
ւարի միջից դուրս քաշել երկու հնազոյն յոյն
փիլիսօփաների՝ Հերակլիտի եւ Դեմոկրիտի դէմ-
բերը: Առաջինը՝ Հերակլիտ, որ Հեղեկեան փի-

մաքը, թէ ընտրութիւնների միջոցին ինչու
են իրար գլուխ կոտորում իւրաքանչիւրը
հոնա եւ գալափ դառնալու համար: Այդտեղ
երեսի ոչ մի գաղտնիք չը մնայ գիւղական
գործիչներից շատերին կաշառակեր կամ ձրիա-
կեր համարելու, քանի որ 3—4 տարի անվարձ
ծառայելով հասարակութեանը, սեփական գոր-
ծից հրաժարվելով՝ եւ ժողովրդի խառնիխուռն
գործերը առաջ տանելով, մի որ եւ գիւղական
գալափ ոչ միայն չը պէտք է հարստանայ եւ
օրէցօր տնտեսապէս բարձրանայ, այլ անշուշտ
աւելի պէտք է տուէ, սեփական վնասներ ու-
նենայ: Բայց մեր գալափաները, թիչ բացա-
ւութեամբ, օրէցօր հոկայական առաջադիւն-
թիւն են ցոյց տալիս նիւթականի վերաբեր-
մամբ:

Բացի այն, որ ոչ մի ազնուութիւն, ոչ մի
արքութիւն չէ կարելի սպասել մեր գաւառի
հասարակական պաշտօնեաներից, դեռ նրանց
ամբողջ գործունէութիւնը պտտում է կեղծիք-
ների եւ կեղծումների շուրջը, մանաւանդ երբ
մէկին պատահում է մի արեւոյց գրագիր:
Մինչդեռ գալափաներից շատերը լինում են հին,
անգրագէտ մարդիկ, որոնք ոչինչ բան չեն հաս-
կանում օրէնքից, ուստի այդ գէպընդ է խիղճը
մնում է գրագիր պ. միդային, որը իր քմա-
հաճոյքի համաձայն գրում է վճիռներ՝ մեղա-
ւար կողմին յաճախ արդար գուրա բերելով, իսկ
արդարին, ընդհակառակն, յանցաւոր ճանաչելով,
որովհետեւ գալափները կամ դատաւորները
միայն ստորագրել գիտեն (երբ գրագէտ են)
կամ ստորագրել կը տան (երբ անգրագէտ են):
Եղել են գէպեր, երբ մի որ եւ է գալափ,
որ մի թիչ արողի հետ սէր է ունեցել (իսկ
չառերը ստատիկ արեւոյցներ են լինում, քանի
որ նրանց ձրիապէս առաջարկում են խմել)
արել է եւ պարկելով քննել՝ իր կնիքը տուել
է «պա՛ն» կամ կնոջը կամ եղբորը, կամ թէ
գրագիրն, որը անգրել, հասարակ թղթեր կըն-
քնելով մի քանի թղթեր՝ իր մօտ է պահել
ապագայում կեղծ մուրհակներ, կեղծ պայմա-
նագրեր եւ այլ «բոկոմանանք» սարքերու հա-
մար... իսկ գալափի ստորագրութիւնը, ինչ-
պէս ասեցի՝ ինքը միդա-գրագիրը կարող է
կատարել վճան անգրագիտութեան եւ խնդ-
րանք նորին ստորագրելու՝ եւ այլ նախադա-
տութիւններով...

Մեր գաւառի բոլոր գիւղերը բաւական հա-
րուստ են, երբ նրանց առաջարկէք մի 500 ր.
գումար յատկացնել մի լաւ գալափի համար
իբրեւ տարեկան ոոճիկ,—ոչ մի գիւղական հա-
սարակութիւն չի յօժարի: Բայց միւս կողմից
նա չէ հասկանում, որ անվարձ գալափին զո-
հարեցութիւններ եւ այլ մանր-մանր փէշէշ-
ներ ու կաշառքներ տալով, տարւոյ ընթաց-
քում ժողովուրդը հազարներ է տուում: Մենք
500 րուլի ենք ասում, բայց 1000 ր. տալ մի
գործող գալափի աւելի օգուտ է գեղջկական
հասարակութեան համար, քան թէ նրա ձրի
պաշտօնավարութիւնը իբրեւ ոոճիկ մի 5—600
ր. վարձ ստանալով 6—7 գիւղերից բաղկացած
մի մեծ հասարակութիւնից, գիւղական գալա-
փան իբրեւ արդէն ապահովված մարդ՝ աչք չի
անկի գիւղականների զոհաբերութեան, նրանց
պատւին—կաշառքին, փէշէշին (որը գիւղում
կաշառի բնաւորութիւն ունի) եւ յետ կը վանէ
իրանից ամեն մի արողի եւ գինու բաժակ, որը
գրգռում է շատերի անորժակը եւ որը մի ա-

դէմ, որքան Բուրենսին: Սա կարծես հաճոյք է
զգում հեղեկ արմատացած նախապաշարմունք-
ները, սրբագործել մարդկային բնութեանը յա-
տուկ վայելեցնել, մերկ մարմնի կուլով վե-
րակենդանացնել եւ նրան հաւասար իրաւունք
տալ հոգեկան այլ հակումների հետ, որոնք ա-
ռաքնութիւն անունն են կրում: Մի տեղ եւ
տեսայ Բուրենսի Ալէքս ու Նախանձը, մի խիստ
ընտելորէ գործ. նկարին ինքն է գրկել իր չի-
կաներ, հաստամարմին կնոջը կրծքում, նոյն լոկ
անհամեստ շարժումով, երկու գէմբերն էլ վա-
յելի իր ձով բորբոքված, իսկ հեռուից նայում
է նախանձի չոր աչքը այն երջանկութեան վրա:
Սա մի յանգուգն մարտահրաւէր է միջին դա-
րերին, դա մի ըմբոստ ծիստ է, որով նկարիչը
կործան գալափացած թանգը խաւարի, անտա-
նեի դարձած բարոյական բնութեան դէմ,
յետ է քաշում ընդունված պատշաճաւորութեան
քողը եւ քանդում է դարերի մի ամբողջ շէնք:
Երեւոյթութիւնները ինչ շրջանում էլ կատար-
վելիս լինեն, երբեք առանց ծայրահեղութիւն-
ների չեն անցնում:

Իրեւոյ նկարչին հաճելի է եղել դարերի խա-
ւարի միջից դուրս քաշել երկու հնազոյն յոյն
փիլիսօփաների՝ Հերակլիտի եւ Դեմոկրիտի դէմ-
բերը: Առաջինը՝ Հերակլիտ, որ Հեղեկեան փի-

ռանձին գեր է կատարում գիւղական շրջաննե-
րում, մեծ չարիք բերելով ժողովրդի գլխին:
Կոստ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԻՑ

Մայիսի 15-ին

Հայ բեմը վերակենդանում է. ինչպէս
չուրախանալ. գիտակցական վերաբերմունք դէ-
պի մայրենի բեմ,—անա այն խթանը, որ միայն
կարող է ծննդնել նոր ոյժեր եւ ընդունակ է
գործը պահել պահպանել վայելուչ վիճակի մէջ,
պատշաճաւորութեան սահմանում: «Մշակ», լատ
իր աւանդական գեղեցիկ սովորութեան, միւս
նուիրել է եւ նուիրում է իր սուղ էջերը մայ-
րենի բեմի ազնիւ վաստակաւորներին, խրա-
խուսելով նրանց գործունէութիւնը յօգուտ հայ
բեմին եւ մտարկելով, երբ այդ գործունէու-
թիւնը ճգնել է ոտի տակ տալ այդ հասարա-
կական, վսեմ կրթական հիմնարկութիւնը: Այս
անցնում մի համար, որի մէջ յիշատակված չէ
լինել, թէ կուղ թողնել կերպով, այս կամ այն
քաղաքում տրված մի ներկայացում: Գեղեցիկ
գործ, եւ ոչ պակաս յաւատ, բայց հաճելի ցան-
կութիւն՝ այդ գործը առաջ տանելու:

Մեր առաջադէմ ինտելիգենցիան զգալի կեր-
պով սթափվել է իր խոր քնից եւ խմբերի բա-
ժանված աշխատում է գործը վանդուս պահել
չը նայելով որ կանոնաւոր խումբ չը կալ՝ ա-
կան ներկայացումներ միշտ ունենում ենք:
դական սերողների շնորհիւ, որոնց թուում էր
բելի է տեսնել այնպիսի պատշտների եւ մաս-
ւանդ տիկիկների, որոնք երբեք բեմ չեն բար-
րացել, կասեմ աւելին—որոնք, կանոնաւոր
խումբ եղած ժամանակ, զգալաւորութեամբ են
յաճախել հայ ներկայացումները: Թուում է թի-
այժմ պայմանները փոխվել են. կը ցանկանա-
լինք հաւատալ, որ գործողների հայեացքներն էլ
փոխվել են հայ բեմի վերաբերմամբ դէպի
լաւ... երեւոյթն ուրախալի է:

Կաթիլ կայծիկ ջուրը ժայռ է ծակում, մեզ
հասարակութեան անտարբերութիւնը կամայ
կամաց նոյնպէս տեղի է տալիս գիտակցական
գործունէութեան, որի յարատեւութեան գրա-
ւական կարող է համարել ներկայի շարժուն
կենսունակ աշխատասիրութիւնը այդ ա-
պարէզում: Ամբողջ արտից ցանկանում ենք ա-
ջողութիւն:

Խան.

ՆԵՐՔԻՆ ԷՈՒՐԵՐ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրա-
տարակութեան համար ստացանք տիկին Մա-
րիամ Խարազեանից 5 րուլի, որ նախկին գու-
մարի հետ կազմում է 737 րուլի 80 կոպէկ:

Մօտ օրերում Թիֆլիս եկաւ յայտնի ֆրան-
սիացի գրող Անդրէ Շէրազամ, որ մի եւ նոր
ժամանակ եւ ֆրանսիական նացիօնալիստներ
ղեկավարներից մէկն է: Անդրէ Շէրազամ թա-
ծանթ է Ռուսաստանին եւ սլաւոնական գոր-
ծերին:

Մեզ հայորդում են, որ Թիֆլիսի Արտիստա-
կան Ընկերութիւնը որոշել է եկող տարվոյ
համար մի քանի բարենորոգումներ անել թա-
րօնական դաշիւճում, որպէս զի պարտէրը ա-

լիսօփայութեան եւ անդուլ շարժման ու լինե-
լութեան սխտեմի նախահայրն եղաւ, աշխարհ
հի իրերի անկայունութեան եւ յարատեւ աւե-
րածի առաջ կանգնած է թախմապատ մտաւոր
գուլթամբ եւ շրթունքները կարծես կրկնում
են նրա մօայլ, յոռետես խօսքերը, որ նա որ-
տասանել է երկու հազար շինգ հարիւր տարի
առաջ. «ամեն ինչ փուլ է գալիս, ամեն ինչ
քայլում է եւ ոչինչ չէ կանգնում. երկու ան-
գամ մի եւ նոյն գետի մէջ իջնել չէ կարելի
որովհետեւ ամեն անգամ այլ ջուր է մեր առա-
ջը... Մենք իշխում ենք գետի մէջ եւ չենք իշ-
խում, մենք կանք եւ չը կանք միաժամանակ:
Անյուծելի պրօքլեմի առաջ մտայլված, նա կար-
ծես լաց է լինում հոգու խորքերում աշխարհի
անցաւորութեան վրա, ուր ոչինչ չը կալ կա-
յուն, թէ կուղ մի վայրկեան, ուր ամեն ինչ
շարժվում, փախչում է, ինչպէս գետի ալիւ-
ները եւ չը գիտես ուր եւ ինչու համար Միւ-
սը՝ Դեմոկրիտ, հեղուկ ժպտով նայում է առա-
ջը դրած զրօքուսին եւ կարծես դարմանում է
մարդկային տգիտութեան վրա, որ դեռ չը գի-
տէ թէ աշխարհում ոչինչ չէ կատարվում ա-
ռանց պատճառաբանութեան օրէնքի:

(Կը շարունակվի)

Թիւնը, որից նա երբեք չը պէտք է հրաժար-
վէր, եւ սկսէ հոգ տանել այն կրթութեան
մասին, որ պէտք է տրվի իւրաքանչիւր քա-
ղաքացու:

ՊԱՐԻՉ. Միստրական դէպքերայի մի
մասը, որ վերաբերում է արտաքին քաղաքա-
կանութեան. երբեք աչքաթող չանելով երկրի
բարձր եւ մշտական շահերը, մեր արտաքին
քաղաքականութիւնը դաշնակցութեան կողմնա-
կից կը լինի, որի բարերար ազդեցութիւնը
Ֆրանսիան եւ Ռուսաստանը միատեսակ դնա-
հատում են եւ որի մէջ ընդհանուր կար-
ծիքը տեսնում է խաղաղութեան էական եւ-
րաշխարհութիւնը եւ հաւասարակշիւութիւնը:
Նա հոգ կը տանէ յարաբերութիւնների եւ
բարեկամական կապերի մասին, որոնք դի-
ւանում են ընդհանուր ծագում եւ հարե-
ւանութիւն ունենալու պատճառով եւ հիմ-
նարկութիւնների նմանութեամբ: Յարգելով
ուրիշի իրաւունքները, նա այժմ ամեն ջանք
գործ կը դնէ անձեռնմխելի պահպանելու Ֆր-
անսիայի բարոյական եւ նրբական ժառան-
գութիւնը: Դէպքերային շատ ծափահարե-
ցին Հալլաքանդակները յետաձգված են վաղ-
վառ նիստը փակված է:

ԼՕՆԴՕՆ. Համախմբների ժողովը 279 ձայների
մեծամասնութեամբ 193-ի դէմ ընդունեց ֆի-
նանսական այն օրինակի մասը, որի մէջ խոս-
վում է հացի մաքսահարկերի մասին:

ՊՐԷՏՈՐԻԱ. Մինչեւ այժմ անձնատուր եղան
7000-ից ավելի բռնիներ:

ՀԱՄԲԱ. Երկրորդ պայտը միաձայն հաս-
տատեց պայմանագրութիւնը Գերմանիայի հետ
ասիական գաղթականութիւնները կարելով մի-
ացնելու վերաբերմամբ, որը կանցկացնի գեր-
մանո-հոլանդական կոյունիս:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Ժողովրդական լուսաւորու-
թեան միջնորդութիւնից յայտարարվում է, որ
ներկայ տարվայ սեպտեմբերի 4-ին Համաբու-
րում կը բացվի արեւելագետների 13-դ միջազ-
գային կոնգրէս:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՊ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՒԱՆՈՅ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիւր, Վորոնցովի արձանի հասդէպ)

ԱՄԵՐԻԿԱ, ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ՝
ԱՌԱՌՈՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՍԱՐԱՐԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
թեան, վերականգնող (սիֆիլիս) եւ միզապատ. հիւանդ.

Կ. Մ. Չիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին եւ
ներարգային հ.

Կ. Ի. Գոլիկով—12—1 ժ. ականջի, քթի եւ կո-
կորդի հ.

Ջ. Ի. Բաբանասեան—11—12 ժ. կանանց եւ
երեխայաց հիւանդ.

Ա. Պ. Կուրապեյսեան—1—1 1/2 ժ. ներքին եւ
երեխայաց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ
Ն. Ն. Ռուսոմովսկի—5—6 ժ. վերաբու-
թեան եւ մարմնի հ.

Ա. Ն. Եպիփանի—6—7 ժ. ներարգային (երկ-
տարբայ), վերքեր եւ մարմնի հ.

Գ. Ա. Թաւրիսեան—7—7 1/2 ժ. ներքին եւ
երեխայաց հ.

Բ. Ա. ՆԱՍԱՐԱՐԵԱՆ—7 1/2—8 ժ.
Վարը 50 կ. չքաղները ձրի, Համախորհրդի
(կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Առվիշակի—տանը. ծաղկահատ եւ բը-
ժըղկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ՄԻՆԱՍ ԶԱԽԱՐԲԵԳԵԱՆ
այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հան-
քային ջրերում (Պետրոգորսկի)

ԼՈՅԱ ՍԵԱՆ
ԲԺ. Վ. ԱՐԴՐՈՒՆՈՒ
ԲԺՇԿԻ ԶՐՈՅՆԵՐԸ
№ 3 «Վարակիչ հիւանդութիւնները եւ
նրանց թոյնը—15 կ.

№ 4 «Քրոնիկական բարակացում—10 կ.
№ 5 «Դողերոց կամ մաշակում—5 կ.
№ 6 «Բնափութեան կամ նորոգում—3 կ.

(Բոլորն էլ պատկերազարդ)
Ծախվում են «Կենտրոնական» եւ «Գուտ-
տենբերգ» գրադատանոցներում եւ հե-
ղինակի մօտ (Տիֆլիս, Դ—ր Բրայնի).

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ԱԻԵՏԻՔ ԲԱՐԱՅԵԱՆ
Այս ամառ հիւանդներ ընդունելու է ոչ թէ
ժելեզնոօդային, ինչպէս սխալ լուր է տա-
րածված, այլ Արաւիկայում (յունիսի 10-ից,
Տրուբեցկոյի փողոց դաշա):
(հ. կ.) 1—3

ՀԱՅՈՑ ԴԻՍՍԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնելով, որ մայիսի 26-ին նշանակած ընդ-
հանուր ժողովը չը կայացաւ՝ հրաւիրում է ըն-
կերութեան անդամներին նոր ընդհանուր ժո-
ղովի, որ տեղի կունենայ կիրակի, յունիսի
2-ին, ցերեկվայ ժամի 12-ին, Թիֆլիսի Արտիս-
տական ընկերութեան դահլիճում:

Պարագմունքների առարկաներն են՝
1) Ընկերութեան իսկական եւ նպատակը ան-
դամների ընտրութիւնը:

2) Բնակչութեան իսկական յանձնաժողովի ընտ-
րութիւնը:

3) Վարչութեան ղեկավարում վարչութեան ան-
դամների հերթական պաշտօնաթղթութեան մա-
սին:

4) Ընթացիկ գործեր:

3—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ
Լ Ո Ւ Ս Ա Տ Ի Պ Պ Ա Տ Կ Ե Ր Ը
ԳԻՆԸ Է 25 Կ.

Գումարով ցանկացողներին դիմում կը լինի
եւ ճանապարհածախս չեն վճարի: Դիմել՝ Տիֆ-
լիս, Троицкая, С. Согомоняну. 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սարեմիկ
ՅԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻՄՆԱԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վաճառքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի:
(հ. կ.) 57—60

Ա Տ Ս Մ Ե Ա Բ Ո Յ ժ
Կ. ԿԵՕՆՃԵԱՆ
փոխադրվել է Երեւանէ: հրապարակ, տուն
Գուրգենովի (Սոլովակայա փողոցի անկիւն):
Ընդունում է հիւանդներին առաւօտեան 8—2,
երեկոյեան 5—8 ժամին.

20—25

ՕՐԵՍՍՈՒ ՀԱՅՈՑ ԵՆԴԵՑՈՒ ՀԱՄԱՐ
ՊԵՏԻ Ե ՄԻ ԴՊԻՐ
որ կարողանայ եւ խումբ կազմել: Պայմանների
մասին դիմել՝ Одесса, Армянская церковь,
Етитору С. Асвадурову. 4—5

Դ Օ Կ Տ Օ Ր
ՎԱՀԱՆ ԱՐԺՐՈՒՆԻ
այս ամառ եւս ընդունում է հիւանդներին
հանքային ջրերում (Պետրոգորսկի):
Пятигорск, Вѣрхн. 6. д. Султанъ Крѣмъ-
Гирея. 5—10

ՀԱՐԱՐԱՅԻՆ ՊԱՐԱԿԱՆԱՆԻ
ՊԱՐԱՅԻՆ ԾՈՅԻ
ԶԻՅՈՒՆՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ
(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ
Պարսից ծոցի առեւտրի մասին, ունի ներկա-
յացողից հարաւային Պարսկաստանի ն աւա-
ւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարու-
թիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ,
փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ
Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պա-
յմաներով.—Հասցէն. Zeytoon C. G. Buehira
Persian-Gulf. 15—100

Բ Ժ Ի Շ Կ
Կարապետ Աղաջանեանց
Ընդունում է ջրային (էլեքտրաբուժարան) եւ
ներքին հիւանդութիւններից ժելեզնոօդային
եւ Պետրոգորսկում:
(Курсовая ул., д. Поставской)

2—5

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը լոյս կը տեսնէ
Լ Ե Օ

ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Մանրամասն կենսագրութիւն, լուսարանված գրական-պատմական տեսութիւններով.
Երկու հատոր, մօտ 650 էրես, բազմաթիւ (25-ից ավելի) պատկերներով (նադարեանց եւ նրա ժա-
մանակակիցների, «Հիստորիայի» գլխաւոր աշխատակիցները, նադարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը, Կիւ-
սիստոսի վանքը):

Մինչեւ տպագրութեան վերջնալը բացվում է ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ:
Բաժանորդագիրն է 1 ՐՈՒՐԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒՐԼԻ 35 ԿՕՊԵԿ:

ԼՈՅԱ ՍԵԱՆԻ լույս յետոյ գինը կը բարձրացնի:
Հատորները առանձին չեն ծախվի: Առաջին հատորը, լոյս տեսնելուց, կուղարկվի բաժ-
նորդներին եւ վաճառքի չի հանվի մինչեւ երկրորդ հատորի լոյս տեսնելը:

Վերադրված քաղաքագրութիւնն է ընդունվում:
Բաժանորդագրութիւնը ընդունվում է «Մշակի» խմբագրատանը: Դրա քաղաքներից դի-
մում են. Тифлисъ. Редакция „Мшакъ“.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ ԳՐԱԴԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են

«Լիակատար բառարան ուսուցչին» հայերէն, կազմեց Յ. Դադբաշեան, պր. սկ առաջին (բոլոր
կը լինի 10 պրակ) 1 ր. Բաժանորդագրութիւնն է ընդունվում լոյս տեսնելուց 6 ր.
«Համառոտ կենսագրութիւն Միքայէլ Նալբանդեանի» (1830—1866), գիրքն է 15 կ.
«Երեւելի մարդիկ» (փոքրիկ կենսագրութիւններ) ԼԷՅՈՒ, գ. 15 կ.
«Կրակ» եւ «Միւսիս» Շիրվանշադէի, գ. 80 կ.

«Համալիր», Շէքսպիրի, պատկերով, թարգմանութիւն Գ. Բաբաջանի, գ. 1 ր.
«Շէքսպիր եւ իր Համլէթ» ողբերգութեան աղբիւրն ու ընթացողութիւնները, Պ. Աղաջանի 1 ր.
«Երեւելի» հիւանդութիւնը, բժ. Ա. Բուրուլեանի—15 կ.
«Թորաթիւ կամ բարակացում», «Էնֆիլեզիա» եւ «Վարակիչ հիւանդութիւններ», բժ. Արծր. 23 կ.
«Կենսագրութիւն Հ. Ղ. Ալիշանի», պատկերազարդ, աշխ. Հ. Ս. Երեմ.—1 ր. 20 կ.
«Սահակ Պարթեւ», «Մեքարպ Մաշտոց» եւ «Մանկէք», կազմեց Ե. Թ.—17 կ.

«Սուրբ գրք» հին ուխտի պատմութեան ընդարձակ աշխարհագրութիւն, աշխ. Գ. Զահ. Մանդ-
կուն.—2 ր. 50 կ.
«Պատմութիւն հայոց գրականութեան», աշխ. Ստ. Պալասեանի—90 կ.
«Բարեպաշտներ», «Յուդայի վերջին գիշերը» եւ «Փարիսի», Սալ. Զահ. Փանեանի—30 կ.
«Պատկերազարդ այբուբէն», հրատարակչութիւն իշխ. Մ. Թումանեանի—1 ր.

«Էմիլիան» ազգագրական ժողովածու, հատոր Ա., «Փշրանքներ Շիրակայ ամառներից», հաւա-
քեց Աղ. Միքիլեանի—1 ր.
«Էմիլիան» ազգագրական ժողովածու, հատոր Բ., «Ժողովրդական վէպ եւ հէքիթ», հաւաքեց
Ս. Հակոբեանի—1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“. Г. Галустьяну, Лорис-
Мелиовская ул. № 11.

2—3

Հարկաւոր եւ երկու փորձված Ուսուցիչներ

Գէորգ ունեցող, Զանգեզուրի գաւառի Շիրվանցի գիւղի պետական երկրասեան գիւղական
դպրոցի համար Ուսուցիչները կարող են լինել եւ ամուսնացածներ, ուսուցչութեան իրաւունք
ունեցողը ի նկատի ունենալով, որ դպրոցում պէտք է սովորեն հայ եւ թուրք երեխաներ, ու-
սուցիչները պէտք է իմանան հայերէն, ցանկալի էր եւ թուրքերէն խօսակցական լեզուն: Դպ-
րոցում ուսուցիչը կը սկսվի ներկայ տարվայ սեպտեմբերի մէկից, ծանկացողներին խնդրում են
վաղորդը յայտնել իրանց ցանկութիւնը:
Դիմել դպրոցի հիմնադիր Գաւառի Տէր-Մարգարեանցին, Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ,
տուն Դորքեանկու, № 18, կամ «Մշակի» խմբագրատանը:

8—10

Պ. Ա. Սմիլնովի Ընկերութիւնը Մօսկվայում

հաղորդում է ի տեղեկութիւն իր յարգելի զնոյնների, որ բարձր յատկութեան ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻ,
Կովկասեան բնական ԿՕՆԵՍԿ, օդիներ եւ լիկեօրներ կարելի է գնել բոլոր խանութներում, իսկ
մեծ քանակութիւններով, Մօսկվայի գնեւորով, աւելցնելով միայն ճանապարհածախսը—
ԵՂ. Բ. Ա. Գ. Ի. Ա. Ն. Ե. Բ. ի պահեստից, Բազում, Քալանթարովի պատաստում:

Պարսկաստանի բոլոր քաղաքների համար յիշեալ ապրանքները ուղարկվում են ակզիզ
դուրս եկած:
(հ. կ.) 18—20

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐՆԸ
Գումարում է ֆինանսների միջնորդութեան իրաւասութեան տակ Ուսումնարանը հիմնված
է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը ընդամենը 5 է: Առաջին դասարանը
ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարած աշակերտները
(1872 թ. կանոնադրութեան համաձայն): Ուսման վարձը տարեկան 80 ռուբլի է:
Դասընթացը աւարտողների իրաւունքները.—անձնական պատուաւոր քաղաքացու կոչում
հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ: Պետական ծառայու-
թեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան 2-
նորագրութեան մէջ՝ երկրորդ կարգի արտոնութիւններ:

Ուսումնարանը կը բացվի 1902 թ. սեպտեմբերի 17-ին: Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի
18-ին: Ուսումնարանի բնակարանը.—Երկրային իրաւագրակ, № 23, տուն Զարեմի:
Խնդրեցները.—մտորկական, կոչման եւ ծաղկի պատուաւորական վկայականների հետ մի-
սին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի
1-ը:

Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի դի-
մեկտորը:

7—7

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“
ԿՕՆՑԷՏԻ ԵՒ ԾՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները աշխատանք
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱՐ-ԼՕՈՒՄԻՍ, Կարմէլ «ԻՐԻՒԼԵՆԱՅԱ» եւ առհաս-
րակ բարձր յատկութեան կարմալներ մրցելու:

Գործարանում աշխատում են մարաթաղաքի նշանաւոր վարպետներ
Պատկերներով դիմել. Թիֆլիս, Պալլոզկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հետախօս № 362, գործարանական խանութիւնը № 772:

(հ. կ.) 51—100